

# Մարգարեա Էդիկ Բարսեղյանի ուղերձը Գիտելիքի օրվա կապակցությամբ

31.08.2011



## Միբեյի դպրոցականներ, մանկավարժներ

Շնորհավորում եմ Ձեզ Գիտելիքի օրվա և սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Ողջունում եմ բոլոր աշակերտներին նոր ուսումնական, իսկ առաջին դասարանցիներին՝ ուսումնառության առաջին տարվա կապակցությամբ, մաղթում լուսավոր ապագա և հաջողություններ ուսման մեջ:

21-րդ դարը գիտելիքի դար է, պետությունն ուժեղ է իր կրթված քաղաքացիներով:

Լիահույս եմ, որ ուսումնառության տարիները մեր դպրոցականների համար կդառնան իրենց ունակությունների, գիտելիքների ձեռքբերման պատասխանատու և կարևոր շրջան, որի արդյունքում մենք կունենանք հայրենասեր, կրթված և բարեկիրթ քաղաքացիներ:

Շնորհավորում եմ բոլոր մանկավարժներին, որոնք թոթովախոս մանուկից հասարակության լիիրավ անդամ կերտողներ են, և որոնց է վստահված մատաղ սերնդի կրթության և դաստիարակության դժվարին, պատասխանատու և շնորհակալ աշխատանքը:

Մաղթում եմ բոլորին առողջություն, ուժ ու կորով և հաջողություններ:

*Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ*

*ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ*